

ՈՂՋՈՒՆԵԼԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

Ուրախալի է արձանագրել, որ Շվեյցարիայի Հայոց «Ս. Գրիգոր Լուսավորիչ» հիմնարկությունը, որի նախաձեռնությամբ և ջանքերով մեկուկես տասնամյակ առաջ կառուցվեց Ժնևի Հայոց Ս. Հակոբ փառավոր եկեղեցին, այժմ, Շվեյցարիայի հայոց եկեղեցական խորհրդի հետ գործակցաբար, ձեռնամուխ է եղել նույն եկեղեցուն կից մշակութային մի կենտրոնի կառուցման, որը կոչվելու է «Հայ Կեդրոն» («Centre Arménien»):

Այդ կապակցությամբ վերջերս Մայր Աթոռ էր ժամանել շվեյցարահայ համայնքի եկեղեցական խորհրդի նախագահ պրն. Էոժեն Բաբալյանը, որը Ամենայն Հայոց կաթողիկոսի հետ առանձին մի տեսակցության ընթացքում Նորին Սրբությանը հաղորդեց տեղեկություններ «Ս. Գրիգոր Լուսավորիչ» հիմնարկության վերոհիշյալ ծրագրի իրականացման հետ կապված որոշ հարցերի մասին:

«Ս. Գրիգոր Լուսավորիչ» հիմնարկության նպատակն է՝ սույն կենտրոնը դարձնել ապագա մշակութային լայն գործունեության համար կարևոր մի հաստատություն, որտեղ շվեյցարական համայնքի մտավորական ներկայացուցիչներ, մշակույթի և հասարակական գործիչներ հնարավորություն կունենան միմյանց հանդիպելու, աշխատելու, գիտական ու մշակութային լուրջ ձեռնարկումներ ծրագրելու և իրականացնելու:

Մշակութային նման մի կենտրոնի ստեղծումը միջազգային հեղինակություն ու համբավ վայելող մի քաղաքում, ինչպիսին Ժնևն է, անտարակույս ունի բացառիկ նշանակություն հայության համար: Ինչպես Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետն է ասում այս առթիվ «Ս. Գրիգոր Լուսավորիչ» հիմնարկությանն ուղղված իր կոնդակում՝ «Հայաստանյայց Եկեղեցի ու հայ մշակույթ, բազմադարյան այն երկու մեծ արժեքներն են հայկական ոգեկանության, որոնք քաղաքակիրթ աշխարհի հորիզոնին վրա կիանդիսանան փառքն ու պատիվը մեր ազգին, երեկ, այսօր և հավիտյան»:

Նորին Սրբությունը, ողջունելով «Ս. Գրիգոր Լուսավորիչ» հիմնարկության այս գեղեցիկ մտահղացումը և սիրով ընդառաջելով իրեն ուղղված դիմումներին, 4 հունիս 1985 թվակիր սրբատառ իր կոնդակով (Հայոց Հայրապետի կոնդակը տես «Էջմիածին» ամսագրի սույն համարում, էջ 3) կոչ է ուղղում համայն շվեյցարահայությանը՝ իր նյութական և բարոյական աջակցությամբ նպաստելու առաջադրված ծրագրի իրականացմանը՝ Մայր Աթոռի կողմից այդ նպատակի համար արված տասը հազար դոլարի մի նվիրատվությամբ բացված հայտարարելով հանգանակությունը:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը, ջերմապես գնահատելով «Ս. Գրիգոր Լուսավորիչ» հիմնարկության այս գովելի ձեռնարկը, ցանկանում է նրան լիակատար հաջողություն՝ իր ազնիվ նպատակի իրագործման ճանապարհին:



Ս. ՀԱԿՈԲ ԵԿԵՂԵՑՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՔԸ ՀԱՐԱՎ-ԱՐԵՎԵԼՔԻՑ



Ս. ՀԱԿՈԲ ԵԿԵՂԵՑՈՒՆ ԿԻՑ «ՀԱՅ ԿԵԴՐՈՆ»-Ի ՇԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ
(ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎՄՏՅԱՆ ՃԱԿԱՏ, ՆԱԽԱԳԻԾ)